**Արձանագրություն N 2**

«ՀՀ ԷՆ-ԳՀԱՇՁԲ-20/31» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի
(Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման)

ք. Երևան 21 մայիսի 2020թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի

նախագահ՝ Վ.Վարդապետյան

քարտուղար՝ Գ.Մելիքսեթյան

անդամներ՝ Է.Կարապետյան, Մ.Էլոյան, Գ.Սիմոնյան Մ.Թահիրյան

**1. ԳՀ ընթացակարգի հայտերի բացման մասին**

1. Ընդունել ի գիտություն, որ՝

ա. Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման մրցույթին մասնակցելու հրավերը 2020թ հրապարակվել է «gnumner.am» կայքի Գնումներ կատարելու ԳՀ ընթացակարգ հայտարարություններ բաժնում, ինչպես նաև www.armeps.am էլեկտրոնային կայքում:

բ. գնային առաջարկները բացվել են 2020 թվականի մայիսի 19-ին՝ ժամը 10:00-ին www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով:

գ. www.armeps.am կայքի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/h | Մասնակցի անվանումը | Մասնակցի գտնվելու վայրը |
|---|---|---|
| 1. | «ԱԼ ԵՎ ԱՐ» ՍՊԸ | ք. Երևան, Նուբարաշեն,Հեռ. 095532201 |
| 2. | «Բիլդերս» ՍՊԸ | ք. Երևան, Էրեբունու 26,15,Հեռ. 055880599 |
| 3. | «Հեր-Մուշ շին» ՍՊԸ | ք. Երևան, |
| 4. | «Ալտերնատիվ Գրուպ» ՍՊԸ | ք. Երևան, Մաշտոցի պող 54Ա, Հեռ. 099871104 |
| 5. | «Նոյավան» ՍՊԸ | ք. Արարատի մարզ գ.Ավշար Խորենացի 93,95Հեռ.0055045020 |
| 6. | «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ | ք. Երևան,Սարի թաղ.6-րդ շարք 22տ,Հեռ.095775969 |
| 7. | «Զի ԷՆԴ Զի ՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ | ք. Երևան, Նալբանդյան40ա, Հեռ. 094227055 |
| 8 | «Մոփադյան Շին» ՍՊԸ | ք. Երևան, Էրեբունի, Վարդաշեն9 փ.65 Դ.2րն 48,43. բն Հեռ. +37437186528 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0***

**2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին**

2.1 ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար շենքերի ընթացիկ վերանորոգման համար հայտարարված մրցույթին ներկայացված գնային առաջարկները ուսումնասիրվել են գնահատող հանձնաժողովի կողմից, որի արդյունքում արձանագրվել են, հետևյալը՝

**ա/ «ՁԻ ԷՆԴ ՁԻ ՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ,«ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ, «Հեր-Մուշ շին » ՍՊԸ, «Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ, «Նոյան» ՍՊԸ չեն ներկայացրել գնային առաջարկին կից ԾԱՎԱԼԱԹԵՐԹ -ՆԱԽԱՀԱՇԻՎ մեկ միավորի գնի հաշվարկով հարկերը ներառյալ:**

**բ/«Հեր-Մուշ շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1-ը չի ներկայացված հրավերի պահանջներին համապատասխան:**

**գ/ «ՁԻ ԷՆԴ ՁԻ ՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ-ն, «ԱԼ ԵՎ ԱՐ» ՍՊԸ-ն, «ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ-ն, «Հեր-Մուշ շին» ՍՊԸ-ն, «Ալտերնատիվ գրուպ» ՍՊԸ-ն ,«Մուրադյան Շին» ՍՊԸ-ն, «Նոյավան» ՍՊԸ-ն կողմից ներկայացված Հավելված 1.1-ը լրացված է թերի:**

**դ/«Ալտերնատիվ Գրուպ» ՍՊԸ-ի, «Մուրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎԸ չի համապատասխանում ներկայացված Հավելված 2-ով ներկայացված գնային առաջարկին:**

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. <Գնումն. գործընթ. կազմ. մասին> թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը՝ մասնավորապես. *եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:*

**Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց գնահատման հանձնաժողովի նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով:**

2.2 Սահմանված ժամկետում վերոնշյալ անհամապատասխանությունները շտկեցին և ներկայացրեցին գնահատող հանձնաժողովի ուսումնասիրությանը **«ԲԻԼԴԵՐՍ», «Էլեկտրոնիկ Գրուպ», «ԱԼ ԵՎ ԱՐ», «Ալտերնատիվ Գրուպ» ՍՊԸ-ները, բացառությամբ «Նոյավան»,**

«ՁԻ ԷՆԴ ՁԻ ՔՈՆՍԹՐԱՔԹ» ՍՊԸ-ների: Վերջիններս չեն ներկայացրել պահանջվող փաստաթղթերը, իսկ **«Հեր-Մուշ շին» և «Մուրադյան Շին» ՍՊԸ-ն** ներկայացրել է թերի փաստաթղթեր:

**2.3 Հիմք ընդունելով վերոգրյալը հանձնաժողովը որոշեց մերժել** «Յոյավան», «ՁԻ ԷՆԴ ՁԻ ՔՈՆՍԹՐԱՔԹ», «Մուրադյան Շին» ՍՊԸ և «Հեր-Մուշ շին» ՍՊԸ-ներին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0***

**3. Տեղեկատվություն հայտերի հարցումների և պատասխաններ ի վերաբերյալ**

Հարցումներ չեն ստացվել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0***

**4. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներ ի վերաբերյալ**

Մասնակիցների գնային առաջարկները հետևյալն են.

| Հ/Հ | Աշխատանքի անվանումը | Բյուջեով նախատեսված գումար | «ԷԼԵԿՏՐՈՆԻԿ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | | «Ալտերնատիվ Գրուպ» ՍՊԸ | | «ԱԼ ԵՎ ԱՐ» ՍՊԸ | | «ԲԻԼԴԵՐՍ» ՍՊԸ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Առանց ԱԱՀ գումար | ԱԱՀ-ն ներառյալ | Առանց ԱԱՀ գումար | ԱԱՀ-ն ներառյալ | Առանց ԱԱՀ գումար | ԱԱՀ-ն ներառյալ | Առանց ԱԱՀ գումար | ԱԱՀ-ն ներառյալ |
| 1 | Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ծեռքբերման | 900000 | 147966,7 մեկ միավորի գին | 177560 մեկ միավորի գին | 164570 մեկ միավորի գին | - | 145505 մեկ միավորի գին | 174607 մեկ միավորի գին | 174808 մեկ միավորի գին | 209770 մեկ միավորի գին |
| | | | 600000 | 720000 | 680400 | - | 622499 | 746999 | 748000 | 897600 |

- ***Գնային առաջարկները աղյուսակում ներառված են մեկ միավորի գնի և պայմանագրի գնի ամբողջ ծավալի հաշվարկով:***

***Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0***

**5.Գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

ա/ Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել **«Էլեկտրոնիկ Գրուպ» ՍՊԸ**-ին:

բ/ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

գ/ պայմանգիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի 10 (տասը) տոկոսի չափով՝ միակողմանի հաստատված հայտարարություն՝ տուժանքի կամ կանխիկ փողի, կամ բանկային երաշխիքի ձևով, որը ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

Ընդունվել է որոշմա կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի

նախագահ՝ ____________ Վ.Վարդապետյան

քարտուղար՝ ____________ Գ.Մելիքսեթյան

անդամներ՝ ____________ Է.Կարապետյան

____________ Մ.Էլոյան

____________ Գ.Սիմոնյան

____________ Մ.Թահիրյան